

ցաններ, թէպէտ գիտակ իսկ ես, ամա այսպիսի եղեալ ոչ էր իսկի, քանզի մարդոյ գլուխ գերետունն անցեր եւ Համա՝ Համուս թալաններ են, Համուս՝ ութ, և Համա՝ հինգ եւ զծեծն աւելի ի վերայ նոցա. հրամանքդ գիտես, ճար մի արա:

Դրեցաւ փետուարի ԺԳ. յաւուր Տեառնընդառաջի [1667]: Անարհեստ յետնեալ Նիկօլոս՝ ալաք թուրապիս մի մոռանայր: Ըստամպօղու Աստուածածնայ ժամուն երեսփոխան Բրիտաստօրի տաճիկ եղբայրն, որ Մարայ խաղնայի հետն էր, խաղնա աղաւսուն քէհիին քէհեան է, եկաւ յերուսաղէմ յԸստամպօղու, մէսաուս մի հանեց՝ թէ երեք չորս անէմ կախեցին. զսուտն եւ զիրան ոչ գիտեմք եւ ոչ պատճառն:

Հրասարակեց՝ Մ. Ե. Ն.

ՈՒՂՆԵԼԻՔ. — 1940 թուոյ Սիւնի մէջ երես 315թ. տոյ 38՝ Վարդանի կարգով՝ Վարդանիս երես 317թ. տոյ 44՝ տնուց մի կարգով տնուց իմ երես 318ա. տոյ 23՝ գիտեմ կարգով զաստեմ:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Սուրբ Արքայոյ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը 1941 Յունուար 16 եւ 17 րրւականով հետեւեալ երկու հեռագիրները րնդունեցաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալ Տ. Գեորգ Արքեպիսկոպոսէ՝ երեսանեկն տնուց:

«Կը խնդրենք հեռագրել Փարիզ՝ Էսմէրանին, որ անմիջապէս կատարուի եւրոպայի թեմերու երեք պատգամաւորներու ընտրութիւնը: Հետեւանքի մասին տեղեկացուցէ՝ հանդերձ լուսաբանութեամբ»:

«Կը խնդրենք հեռագրել Գահիրէի, Պաղտատի, Աթէնքի, Սէլանիկի եւ Մարսէյի առաջնորդարաններուն, որ անմիջապէս ընտրեն իրենց պատգամաւորները: Հետեւանքի մասին հեռագրով տեղեկացուցէ՝ Էջմիածին՝ հանդերձ լուսաբանութեամբ»:

Ս. Պատրիարք Տեղակալ Մրբազանի սոյն յանձնարարութեանց համաձայն, հեռագիրներուդրեց յիշեալ առաջնորդարաններուն եւ Փարիզի եկեղեցական վարչութեան աստեմապետ Տար Պօղոս Էսմէրանի, որ երեկայիս կը գտնուի Վիւի, եւ այս մասին հեռագրով տեղեկացուց Ս. Էջմիածին:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԼԱՆԶԱԽԱՉԻ ՏՈՒՌԻՉՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, 16 Հոկտ. 1940ին, լանջախաչ կրելու արժանութիւն շնորհած էր, 1934ին՝ Հոգեւոյ Տ. Թորոս Պատրիարքին վարդապետական ձեռնադրութիւն ընդունած չորս միաբան վարդապետներէն (Պարոյր Վրդ. Մինասեան, Յուսիկ Վրդ. Աւետիսեան, Պապ Վրդ. Թումայեան եւ Միւռոն Վրդ. Կրնիկեան) վերջին երեքին: Հոգ. Տ. Պարոյր Վրդ., Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան Հոգեւոր-Հովիւ, եւ զապուրիւն առաջնորդական փոխանորդ եղած միջոցին, ընդունած էր արդէն լանջախաչ կրելու արժանութիւնը, երջանկայիտասակ Տ. Սահակ Վեհ. Հայրապետի հրամանաւ, եւ Ս. Արքայոյ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հաւանութեամբ:

ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

* 1 Դեկտ. Կիր. — Ս. Պատրիարք մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետի Փարոզեց Տ. Պարգեւ Վրդ., րնարան առնելով հետեւեալ խօսքը. «Ձի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհք եւ համարաւթիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եւ շին»: Յոյց տուաւ Հին Օրէնքը իբրեւ աստուածային պատուիրաններու ամբողջութիւն, իսկ Նորը՝ զերազանց միջոց փրկութեան եւ ազատագործման: Նոր Ուխտը հոգեւոր առաքելութեանց զօրծաղրութիւնը կը պահանջէ: Օրէնքը պահելով՝ յարգած կ'ըլլանք մեր ներքին եւ քարոյական կեանքը:

* 4 Դեկտ. Դշ. — Ս. Կուսի Ընծայման տօնին առթիւ, Միաբանութիւն եւ աշակերտութիւն, հազառակ աննպատակ եղանակին եւ անձրեւին, չքերթով իջան Դիթանմանի ձորը: Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Հրաշափառոյ մուտքը Աստուածածնայ Տաճարէն ներս: Այս մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատրիարք. որու ընթացքին քարոզեց Տ. Սեբօրէ՝ Վրդ., բացատրելով ընծայաբերութեան նշանակութիւնը իբրեւ խրաջուր Աստուծոյ կամքին, իբրեւ պատրաստակամութիւն՝ տեղ տալու, իր սրտին մէջ, Աստուծոյ րիտը զգացումներու եւ ներկայացուց Ս. Կոյսը իր առօրեայ կեանքին մէջ իսկ, ուր իր խօսակցութիւնները Աստուծոյ զգացումն են լցնուած, որուն պատճառաւ իսկ արժանի եղաւ հաւատացեալներու եւ Աստուծոյ Որդւոյն մարտնչական պատիւին:

* 8 Դեկտ. Կիր. — Ս. Պատրիարք մատուցուեցաւ ի Ս. Յակոբի Փարոզեց Տ. Շաւարշ Վրդ.:

Պատմելէ յետոյ ապահ մեծատան պատմութիւնը, դասեր հանեց, ըսելով՝ աղահուսիսներ մոլորթիւն է, որ անձնատէր կը դարձնէ մարդը, անտեսել տալով իր շուրջիները, և միայն իր անձին բարիքին մէջ սահմանափակելով անոր մտածումը, Մարդուն մէջ բնազդներ կան, ըսաւ, որոնք պէտք է արժէքի վերածուին և ներգաղնակուին:

* 15 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն: Քարոզեց Տ. Եղիշէ Վրդ. բնարան առնելով Առաքելին խօսքը՝ «Յիսուսա Քրիստոս, երէկ և այսօր, նոյն՝ և յաւիտեան»: Ներկայացուց քրիստոնէութիւնը իրբեւ յաւերժութեան կրօնը, և Յիսուս՝ մարմնացումը այդ կրօնքին, իր խորհուրդին մէջ, նոյն՝ երէկ, ոչսօր և յաւիտեան:

* 22 Դեկտ. Կիր. — Յղութիւն Ս. Աստուածմանի ի յԱմենայն. երէկ կատարուած էր նախատեսակ, Ս. Գաղարայ մայր տաճարին մէջ, կիրակիմիջ ժամերգութիւնէն վերջ: Այսօր, հանդիսաւոր երթով, Միաբնակութիւնն ամբողջ Գեթսեմանիի ձորը իջաւ, Ս. Կուսի գերեզմանին վրայ կատարելու համար մատուցումը Ս. Պատարագի, յետ «Հրաշափառ»ի պաշտօնական մուտքին. տեղատարափ անձրեւին պատճառաւ, մեծ չէր թիւր հաւատացեալ բազմութեան: Ս. Պատարագի ընթացքին քարոզեց Տ. Հայրիկ Վրդ. «Ո՛չ ապաքէն գուք տաւար Աստուծոյ կենդանւոյ էք» բնաբանով. և ներկայացուց Ս. Կոյսը իրբեւ գերեզմանց անօթը՝ ընտրուած՝ զԱստուած իր մէջը ընդունելու, քանի որ ան կրցած էր ինքզինքը դարձնել արժանաւոր տաճար, ուր կարենար բնակիլ կենդանի Աստուածը:

* 28 Դեկտ. Շբ. — Տօն Սրբոյն Գաղարայ Մծբնայ Հայրապետին. նախորդ երեկոյին կատարուած էր նախատեսակի հանդիսաւոր արարողութիւնը: Այսօր, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Դիմազրի մատրան մէջ, նոյն հանդիսաւորութեամբ. սկիզբն ու պատարագի սպասը վերաբերուեցան՝ Աւագ խորանի առջև, քովքտի պատրաստուած շարժական սեղանին վրայէն:

* 29 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագ ի Ս. Գաղար. քարոզեց Տ. Եղիշէ Վրդ. «Յիշեա՛ որդեակ...» բառերով մեկնելով՝ անդրադառնալու համար անցեալին. ներկայացուց պատմութեան անցեալին մէջ իրադրութեամբ արժանիքներ, քաղաքակրթութիւններ, ցոյց տալու համար թէ կարժէ երբեմն կենալ անցեալին դիմաց, ընել հաշուեկշիռը անցեալին, տեսնալու համար թէ ի՞նչ է մնացեր ապրուած կեանքէն: Յիշել անցեալը, կը նշանակէ գիտակցիլ թէ ինք կը պատկանի ազգի մը և եկեղեցիի մը, որ արժանիքներ է իրադրութեան պատմութեան մէջ, և հպարտ ըլլալ անով, ու ջանալ շարունակել անոնց գիծն ու գործը:

* 5 Յուն. 1941, Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն: Քարոզեց Տ. Պարոյր Վրդ. «Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթ» բնաբանով: Այդ երկուքը, ըսաւ, ներկայացուցիչներն են աղօթողներու երկու խումբերուն: Այսօր ալ կան մարդիկ որոնք առօրեայի

հոգերով կը մտնեն տաճար՝ աղօթելու. իրական աղօթողը ան է, որ կը գիտակցի իր մեղքերուն, և անոնց ծանրութենէն ինքզինքը թօթափել կը ջանայ ի՛ր իսկ ձեռքով, և ոչ թէ զայն բարդելով այլոց շալակին: — Երեկոյին, կատարուեցաւ նախատեսակը Դաւթի Մարգարէին և Գաղարայ Տեսուներգոր, հանդիսաւոր Հրաշափառով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ:

* 6 Յուն. Բշ. — Տօն Առաքելական Ս. Արքադոս. Ս. Պատարագ մատուց ի Ս. Գաղար, բուսարարանէն Գեր. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. և քարոզեց «Հաւատք առանց գործոց մեռեալ են» բնաբանով: Յոյց տուած թէ կեանքի և մարդկային պատմութեան մէջ, անհատական ամէն գործ և յառաջդիմութիւն, արդիւնք են եղած հաւատքի: Քայքայումը կեանքին, կը սկսի այն վայրկեանէն, երբ կը դադրի հաւատքի ներգործումը ազդեցութեամբ համբաւի կենցաղափարութեան մէջ: «Հաւատքը» իրբեւ վրասահութիւն, կամ «հանդիսակ»ի հանդէպ յարգանք, պէտք է զօղով սիրով՝ այսինքն նուիրուի, զոհողութեան գաղափարին՝ գործին: Ապա, բարեմաղթութիւնները ըրաւ Ս. Աթոռայ ծաղկուէին, և Միաբնակեան Ուխտին յարատեւութեան, և Ամեն. Ս. Պատրիարք Հօր արեւ շատութեան համար: — Առաւօտուն՝ «Փառք ի բարձունս» էն առաջ, ըստ սովորութեան, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Կպիսկոպոսական զգեստաւորմամբ, անցաւ Ս. Գաղարոս Տեսուներգոր Առաքելական Աթոռին առջև, մինչև «Արարչական» երգին աւարտումը: Տարին անգամ մը, միայն այս տօնին, և վերջիչեալ միջոցին, Ս. Աթոռիս գահակալները կը բաղմին Տեսուներգոր Աթոռին վրայ: «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին, օրուան ռաբբերու յիշատակումին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը յատուկ մաղթանքներ ըրաւ Ս. Աթոռոյս պայծառութեան համար, որմէ վերջ, ներկայ եկեղեցական դասը՝ վարդապետք, սարկաւազունք և զպիրք, մօտեցան ի համբոյր Ս. Հօր Աջին:

* 7 Յուն. Գշ. — Ս. Ասեկանոս. երէկ երեկոյ՝ նախատեսակին, այսօր առաւօտ՝ ժամերգութեան և Ս. Պատարագի ընթացքին, Ս. Աթոռոյս սարկաւազները — թիւով 8 հոգի — վայելուչ հանդիսաւորութեամբ պանծացուցին տօնը իրենց մոտափառով՝ անգրանիկ և նախափայ սարկաւազին: Սրբոյն Ստեփանոսի, զխաւարութեամբ Հօգ. Տ. Տ. Շնորհք Վրդ. և Շահէ Արեղայի, որոնք հրաւիրուած էին՝ Հայնթայէն — Երեկոյին, ժառ. վարժարանի ճաշարանին մէջ, սեղան մը տըրւած էր սարկաւազաց տօնին առթիւ. ուսանողութեան հետ ներկայ էր նաև վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչական կազմը. սեղանին վրայ, եղան խօսողներ՝ ուսուցիչներէն, ինչպէս նաև — իբր շնորհալուծեան խօսք — սարկաւազներէն:

* 9 Յուն. Եշ. — Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պողոսի. նախորդ երեկոյի նախատեսակով, և այս առաւօտեան հանդիսաւոր ժամերգութեամբ ժառաւորուեցաւ տօնը քրիստոնէական եկեղեցւոյ երկու մեծ սուրբերուն և առաքելներուն: Ս.

Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբայ Մայր Տաճարի ձեղնայարկին Ս. Պետրոսի սեղանին վրայ:

✱ 11 Յուն. Շր. — Սրբոց Որբոցն Որոման՝ Յակոբայ Առաքելոյն Եւ Յովնանու Աւետարանից: Մեծ հանդէսով պանծացուեցաւ տօնը «Մայր Տանարին Սրբոց Յակոբանց», ուր, Ս. Գլխադրի մատուցին մէջ, պատարագեց (Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, և քարոզեց, մատրան կից՝ երկու առերթրուն պատկերին առջև շինուած և զարդարուած շարժական սեղանին քովէն՝ «Ո՛ր զիտէք որո՞յ հոգւոյ էք դուք» բնաբանով, պարզելով նկարագիրը Որոման երկու եղբայրներուն՝ Յովնանու և Յակոբոսի, այն զուարեանքուն մէջէն, որոնք համառօտ նկարագրականներով պատմուած են սրբազան աւետարանիչներուն կողմէ: Երկու եղբայրներն ալ, զիտնալով հանդերձ թէ դառն է քրիստոնէքը, որ կը մատուցուի իրենց, Յիսուսի կողմէ, յանձն առին յօժարութեամբ ըմպել զայն, և իրազարմեցին իրենց խոտուած, իրենց կեանքին խիզ գինով:

✱ 13 Յուն. Բշ. — Ըստ եկեղեցական ասմարի, հին տարւոյ վերջին երեկոցեան ժամերգութենէն վերջ, ամբողջ Միաբանութիւնը, պատրիարքարանի գահիճը բարձրացաւ, ուր, Ս. Պատրիարք Հօր ձեռքէն, արտասանուած քանի մը զեղեցիկ խորհրդածութիւններէն յետոյ, ընդունեց աւանդական կազանդէքը՝ Նոր Տարւոյ օրացոյցները: — Նոյն երեկոնք, ժառ. Վարժ. Ի արահին մէջ սարճուած էր առանին կազանդի երեկոյթ մը, որուն հրաւիրուած էին Միաբանութեան գրիթէ ըտրոյնդամները և ուսուցչական դասը, Առաքելականներէ մին կարգաց ուղերձ մը՝ ուղղեալ տեսչութեան և ուսուցչութեան, որուն պատասխանեց Վարժարանի տեսուչ՝ Տ. Եղիշէ Վրդ.: Կազանդէքերու բաշխումէն ետք՝ ժառանգաւոր սաներ ներկայացուցին յոյժ ծիծաղաշարժ երկու տրամներ:

✱ 14 Յուն. Գշ. — Ամանոր՝ ըստ հին տոմարի, սովորութեան համաձայն, պատարագեց ի Ս. Յակոբ, ժամերեւոյ Տ. Դեորդ Վրդ.: Պատարագէն յետոյ, Միաբանութիւնը՝ թափօրով և երգեցմամբ, պատրիարքարան ելաւ, ուր՝ տեղի ունեցաւ Ամանորի հանդէս մը: Ժառանգաւոր սաները երգեցին Ս. Պատրիարք Հօր երգը. Լուսարարայեւ Տ. Կիւրեղ Եւ Վրդ. Իսրայէլեան, ի զիմաց Միաբանութեան, բարեմալթութեան խօսքեր ըրաւ, անդրադառնալով Միաբանութեան անցեալ տարուան ընթացքին ունեցած գործունէութեան: Ապա՝ ժառանգաւորները երգեցին իրենց քայլերգը՝ «Մերտ ի սիրտ», իսկ Տրց. Ասրգիս Սարգիսապ, ուղերձով մը՝ յանուն Ընծայարանի և ժառ. Վարժարանի ուսանողութեան, կուգար իր սրգիական զգացումները յայտնել Ս. Պատրիարք Հօր: Թարգմանչաց Վարժարանի սանուհիները երգեցին Ամանորի երգ մը, և սաներէն մին, Վարժարանի աշակերտութեան կողմէ կարգաց ուղերձ մը: Ի վերջոյ, Մանկապարտեղի կարմրազգեստ փոքրիկները երգեցին, և մին՝ սրտի խօսքերով, և հայեցի յատակ առաքանութեամբ, վարդերու փունջ մը ի ձեռին, իր ընկերներուն մանկական

զգացումները կը բերէր աւելցնել մեծերու բարեմալթութեանց՝ առ Նորին Ամենապատուութիւն Ս. Պատրիարք Հայրը՝ Լուսկ ապա, Նորին Ամենապատուութիւնը տուաւ իր պատգամի խօսքը, որ կ'երևի «Սիրտ» այդ թիւին սկիզբը: Հանդէսի աւարտումին՝ բոլոր ներկաներուն Ս. Պատրիարք Հայրը բաշխեց մի մի նարինջ:

✱ 19 Յուն. Կիր. — Տօն Երեմիայի և Աստուծայայտութեան Տեառն: Երէկ՝ ճաղալոյցի առաւտուն, ամառնային ժամը 10ին, եօթը ինքնաշարժերու պաշտօնական երթով, առաջնորդուած հեծկանուորդ երկու անգլիացի սպաներէ, և հայ սկսուածներու երկվեցեակ շարքէ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Միաբանութիւնը Բեթղեհէմ գացին: Ճամբու կէսին, թափօրին կը միանան Բեթղեհէմէն զիմաւորութեան եկած հայ ազգայիններէ, և Բեթղեհէմի քաղաքապետութեան անդամներէ բաղկացած խումբին երեք ինքնաշարժերը, իսկ քաղաքի մուտքին, թափօրը կը զիմաւորութիւնը կառավարական ձիաւորներու խումբէ մը, որոնք զայն կ'առաջնորդեն մինչև Ս. Երեմիայի վանքին մեծ բակը, ուր թափօր կազմելով, և «Խորհուրդ մեծ» երգելով բարձրացան մեր վանքը, խումբ քաղմութեան պատկառած համադիսաւորութեան ընդմէջէն: Թափօրին կը մատնակցէին նաև Բեթղեհէմի չըջնալային կառավարիչը, քաղաքապետը և այլ պաշտօնական անձինք, որոնք, Ս. Պատրիարք Հօր՝ ժողովուրդին տուած նշնդեան առաջին աւետիսէն յետոյ, հիւրասիրուեցան վանքի տեսչարանին մէջ: — Յետ միջօրեի, ժամը 2ին (ամառնային), Ս. Պատրիարք Հօր հանդիսապետութեամբ, շէրաշխատով մուտք գործուեցաւ Ս. Այրը, ուր Միաբանութիւնը կատարեց իր ուխտը: Ապա, Ս. Երեմիայի եկեղեցիի մեր բաժնին մէջ կատարուեցաւ ճրագալոյցի արարողութիւն, և Ս. Այրին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ:

Կէս զիշերին, Վառք ի բարձունսէն անմիջապէս առաջ, լուցեալ տօներով, Միաբանութիւնը իջաւ Ս. Այրը, ուրկէ, ձայնասփիւռին միջոցաւ, իր պաշտամունքին հաղորդ ըրաւ ի սփիւռս աշխարհին ցրուած հայ ժողովուրդը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ձայնասփիւռով, տուաւ նշնդեան իր պատգամն ու աւետիսը, զոր կը ներկայացնէր այստեղ: —

Այս անգամ եւս ինձ կը վիճակի պատկանութիւն՝ Էքզիքիէմի տոն նուիրական Բաւալէն, ուր քաւեւ աւտոջ տեղի ունեցաւ մարդկային սոգի վեղաբարձութեան մեծ և սխալելի խորհուրդը, սիրոյ՝ օրհնութեան և խաղաղութեան ողջոյն աւանդել Բեզ. Ա՛զգ իմ սիրելի, ժողովուրդ Հայոց, որ ի սահման Պաղեստինի և յարստութեան նորին, ի Հայքեմի և ի սփիւռս աշխարհի:

Մինչ՝ մարդկային սիրոյ և եղբայրութեան խորհուրդի երգ պաշտօնական Այրէն, խաղաղութեան ողջոյնի կ'աւանդեմ, բեկեալ նոգիս կը խոսեմ՝ բէ անդին, ամենեւ բարձր սպերու երակներէն ալիւր կը նստի անարգել: Մարդկութեան փառքն ու պարծանքը նկատուող շնորհն ուսաններուն վրայ լուսնեւ կարկուտ կը տեղայ ցիւեւ ու ցեղեկ՝ կործանու ու կրակ սվաւելով:

Ձեռն խնայուի՜ր, այս ամառը սպանցիկ մէջ, հիւանդ-ներ, կիներ, մանուկներ ու Աստուծոյ պաշտամունքին դուրեւրով հուիւրեալ զեղեցիկացոյն ճանաւորներն անգամ:

Ման է ամեն ուրեք, հոգեւոր երեսին, օղերուն մէջ, ամպերու ետին եւ շուրեւտն յաւակի:

Տխուր ջանք է այս սպանցիկ խնայս մը գտնել, ինչ-պէս փորձեցին ընել այս աշխարհի հոգեւորները, խնայուն-ները:

Վսանգում Բաղրակերպութեան, արհամարհում մարդկութեան այս օտարապէր ի հարկէ ընդգրկած է հաւե-նեզ, ժողովուրդ Հայոց, որ յանուն Բրիտանիոյ վառու-րանում սկստանալէնուն իսկ յարմար ըլլաւ անկի զոհաբերուողը սիսի ըլլալիս իսկ պատմութեանը արխան-համ դարեւուն:

Անցեալ տարի, նոյն այս տօնին, նոյն այս Սուրբ Արշակունի, աշխարհ իսկ ունենալով դարեւ անաշ պատե-կասարում մեր Յիսուս Փրկչին հրաշալի ծննդեան տե-սիկը, եւ մտղքեր էի մեզ համար գործիսնը հոյն այս Մարտիրոս Աստուածաբանին:

Այն ասեմ ամենուրեք հոգին վեցուն էր ամենախոր ան-կաւրիսներով, արդիւն՝ դէպքերու եղբայրական դասու-րումս փրկուածսն, հալածող մեծ պատերազմի ընթացիկն մեզ ստանձնում անպատեհին:

Աշխարհաստան դէպքեր կը զանալիսին իւրաքանչէր, իւրաքանչէր անկի տեղիս եւ անսպասելի:

Փարսաւ՝ մօր ազգեր, կ'յկնան անսկսելի արագու-րեամբ: Երկուսն հարաւոր պարտ չազնայն ունի չար հացին:

Փա՛ւրք եւ զոհութիւն մեր Աստուծոյն: Դէր առաջմ խնայում է կրկնաբար այդ աստիճաններուն իսկ վա-րէյ, Ա՛զգ իմ սիրելի:

Արքի ամառում ու քիթաւում մը կ'ունենան՝ երբ կը խորհինք քէ, քէն ճիշտական դմնայի պայմաններու դէմ միս միանայ, ապահովութիւն ունիս գտն իսկ կեան-հիդ, ըլլալ Հայրենիք մէջ կամ ի սիրտ աշխարհի:

Այս մասնում է որ, սուգի, համաժամում քիթաւ-րեան այս օրերուն, Յիսուսի Բրիտանիոյ մեր պատե-կի Փրկչին Սուրբ Ինքնուրեք եւ Աստուծոյն պայման-տեղին սոյն խորհրդաւոր գիւղերս, սրբազնասուրբ Արքի մէջ համախմբում՝ Ուիլիս եւ մանկունք Սուրբ Արաույս, ու հաւատարմաւ հայ եղբայրներդ ու հայրերդ, իրեն իսկ պատեհաւորներդ ու ներկայացուցիչներդ, ծուրն դրած եմք անձ, ու ամեն միաւունք եւ միանգի կ'աղօթեմք արգարութեան, Բաղրակերպութեան եւ Բրիտանիոյն սիրտ եւ եղբայրութեան յաղթանակին համար, ու կրկնե-լով մեր Սուրբ Դարեւաբանին արտաւայտ մարտանք՝ կ'ա-ղօթեմք որ փարսին մեզն ու մառախուղը, չհամար չարին եւ լուսանաւորութիւնը, տարաբաւին չազնայն ու խորհրդաւոր աշխարհի երեսն:

Եւ այժմ ընծայելով մեզ հաւատարմաւ Սրբալայիս շնոր-հաբաւի օրհնութիւնը, ամենա կը մարդեմք ետանդագին՝ որ քան դարեւ անաշ, սոյն այս հրաշալի գիւղերս, Բերդենեմ Բաղրակի աստղազարդ երկնակամարէն ճնշող հեռեւանային ձայնը, այսօր մանաւանդ, վերսին արձա-գանգէ ու անէտ խորհրդաւոր աշխարհին եւ տարապա-տեհութեան: «Յերկիր ԽԱՂԱՂԱՅԻՒՆ, Եւ ՄԱՐ-ԴԻԿ ԶԱՆՈՒԹԻՒՆ»:

«Բերդենեմ Բաղրակի աստղազարդ երկնակամարէն ճնշող հեռեւանային ձայնը, այսօր մանաւանդ, վերսին արձագանգէ ու անէտ խորհրդաւոր աշխարհին եւ տարապատեհութեան»:

«Բերդենեմ Բաղրակի աստղազարդ երկնակամարէն ճնշող հեռեւանային ձայնը, այսօր մանաւանդ, վերսին արձագանգէ ու անէտ խորհրդաւոր աշխարհին եւ տարապատեհութեան»:

19 Յունուար 1941

Առ

Նորին Ամենապատեհութիւն

Մերայ Արքիպիսկոպոս Նաեմեան

Պատեհաւոր երանալովս

Ձեզ Ամենապատեհութիւն,

Իր խորհրդաւորութեան միջոցով ձեզ համարապէս Ինքնուրեք, որուն հետ անանձնականութիւն ունեցող անցեալ գիւղեր մաս-նակցելով մեր Փրկչի Ինքնուրեք սարեղաւոր հաւանդա-րեան՝ Բերդենեմ Ինքնուրեք կեղեցիկին մէջ, կը զգամ քէ պատեհի գնահատութեան խորհրդի զգացումը յայնեկ այն արքիպիսկոպոսին, խորհրդեան եւ մասնաւոր եկեղեցի-ման համար զորս Ձեր Ամենապատեհութիւնը հոգ տոյց տուաւ մեզի:

Կ'ուզէի հաւել յիշել, քէ խորհրդաւոր սպանումում եմ պատեհումս հաւանդաւոր գեղեցիկութեան, եւ քէ անկէ հոգեւոր միտքաւորութիւն եւ սնունդ վաղեմի, մասնաւորապէս այն մասն՝ զոր Ձեր Ամենապատեհութիւնը կա-տարեց Ս. Արքի մէջ:

Ուզեցի իմ անկեղծ շնորհակալութիւններս յայնեկ Ձեզի կրօնական փորձաւորութեան մը համար, զոր միտք սիսի պատեհ իր գտն մը,

Մենք

Ձեզ Ամենապատեհութեան

Խորհրդաւորութեան եւ խորհրդաւորութեան

ԵՐԴՈՒՐԴ Մ. ՆԱԶԻՆԵՆ

ՏԵՂԱԿԱԼ

Փամբարդութեան աւարտումին, Ս. Արքի աս-ղէ, հարեւոր շնորհաւորեցին Ամեն. Ս. Պատեհաւոր Հայրը, եւ մեկնեցան գոհունակ սրտով, Ս. Պատ-րիարք Հայրը վերադարձաւ Երուսաղէմ:

Տպաւորիչ արարողութեամբ կատարեցան Նոյնպէս «Ջորճիէ»-ի կարգը, եւ Երուսաղէմի Ս. Պատեհաւոր Հայրը, զոր, Ս. Արքի վրայ, մատուց Տ. Դեօրդ վրդ. եպիսկոպոսական զգեստա-ւորմամբ: «Ջորճիէ»-էն անաշ, քարոզեց Տ. Շաւարշ վրդ. «Ձի ոչ գոյր նոցա տեղի՝ լիճանին» ընարանով. ներկայացուց այն խումբը մարդե-րուն որոնք իրենց սրտին, կեանքին եւ ապ-րումներուն մէջ, տեղ չունին մառաւրջի խնայուն երդիքին ներքեւ մարդացած Աստուծոյն:

Կիրակի աստու, Միաբանութիւնն ու մա-ղապատեհութիւն, Նոյն հանդիսաւորութեամբ վերադար-ձան Երուսաղէմ, եւ «Ջորճիէ»-ի մէջ երդիքով բար-ձրացան պատեհաւորութեան լուսազարդում զան-լիճը, ուր, Ամեն. Ս. Պատեհաւոր Հայրը, ընդու-նեց՝ իրենց բերնէն, Օրոշան աւարտը:

Բրիտան ծնաւ եւ յայնեցաւ:

Եւ ամենուն ստեւա իր հայրական փոխադարձ օրհ-նութիւնը:

* 20 Յուն. Բշ. — Մեղեկոյց. Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Գարդգեց Տ. Արթուր Վրդ. «Եւ զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է» քնարանով: Առանձնութեան, միայնութեան ամենէն սխալք և ահաւոր վիճակը, որտի միայնութեան մէջ տեսաւ և ներկայացուց, ձշմարտութեան, սիրոյ, արգարութեան ասպետները, այս աշխարհի վրայ, մինակ են մնացած, ու լքուած, մերժուած, չհասկըցուած: Յիսուս ևս, իր կեանքի ապումներով, առանձին էր, ու օտար, մերժուած, նոյնիսկ երբ մարդոցմէ ընթացատուած էր: Բայց ինքզինք մինակ չզգաց Ան, որովհետեւ Հայրը՝ աստուածային գթութիւնը իրեն հետ էր:

* 26 Յուն. Կիր. — Տօն Անուանակոչութեան. Հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Գրիստօսի Ս. Գերեղմանին վրայ. պատարագեց Գեր. Տ. Կիրեղ Վրդ. եպիսկոպոսական թագով, և քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ «Ո՛ւր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւելս» քնարանով: Աստուծոյ յայտնութիւններէն, լսաւ, մարդերէ ոմանք, զընային կամ անտարբերութեամբ, կամ ատելութեան օգիտով, և կամ հաւատքով: Աստուծոյ այդ յայտնութիւններէն մին է տիեզերքը, որ «Պատմեն զփառս Աստուծոյ», ուրիշ մըն է Քրիստոսի եկեղեցին, իր մէջ՝ զարեւու կեանքով ապրուած և իրագործուած հրաշալիքներով: Այս, և միւս քոյրը յայտնութիւնները, մարդկային պատմութեան և կամ անհատական կեանքի մէջ շղարձակուած, պէտք է ընդունինք հաւատքով, և առաջնորդուինք զէպի լոյսը Մօսէրքին, փրկարար խորհրդածութիւններով:

Վերադարձին, Միաբանութիւնը պատրիարքարան բարձրացաւ «Լոյս ի խնոյ» շարականը երգելով. հոն, ըստ օրօրութեան, կատարուեցաւ Ս. Ծննդեան տնօրհնէի արարողութիւնը, և օրհնուեցան Ս. Աթոռոյ «բարութիւն»ները:

* 25 Յուն. Շր. — Հոգ. Տ. Հմայեակ Արդ., Դադա իջաւ ի պաշտօնէ, Ս. Ծննդեան տօնին առիթով պատարագելու և հոգեւորապէս մխիթարելու տեղւոյն փոքրաթիւ հայութիւնը: Վերադարձաւ երկուշաբթի ցերեկին:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* Դեկ. 3 Դշ. — Երուսաղէմի Կ. Մ. Շ. Ա. ի ընդհանուր քարտուղար Մր. Միւլլըր, այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

* Դեկտ. 4 Դշ. — Երուսաղէմի Անկիլքան եպիսկոպոս Գեր. Կրահմ Պրաւն, բարեկամական այցելութիւն տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Իր փոքր որդւոյն Ֆրանսիսի հետ:

* Դեկտ. 5 Եշ. — Այսօր, երեկոյեան, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով լուսարարապետ Գեր. Տ. Կիրեղ Վրդ. Երեկոյ զանուեցաւ Երուսաղէմի Կ. Մ. Շ. Ա. ի տարե-

կան պաշարին, որ տեղի ունեցաւ ընդ նախագահութեամբ Լէյաի Մաք Մայքրիի. նորին Ամենապատուութիւնը արտասանեց բացման աղօթքը, և օրհնեց բոլոր ներկաները:

* Դեկտ. 14 Շր. — Այսօր, երեկոյեան, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով լուսարարապետ Գեր. Տ. Կիրեղ Վրդ. Երեկոյ զանուեցաւ Երուսաղէմի Յունաց Ամեն. Ս. Պատրիարքի կողմէ տրուած պաշտօնական թէյասեղանին՝ Յունաց պատրիարքարանին մէջ:

* Դեկտ. 15 Կիր. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ լուսարարապետ Գեր. Տ. Կիրեղ Վրդ. ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի կառավարիչ Վսեմ. Մր. Քիթ-Ռօյի որդւոյն՝ ընդձովեայի սպայ Մր. Մարթինի մահուան առթիւ, քաղաքիս Անկիլքան մայր եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

* Դեկտ. 20 Ուր. — Բաշոյի Երուսաղէմի նոր ընդհանուր հիւպատոս Պր. Վիթթա Րիշարտ Դորսաք պաշտօնական այցելութիւն տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

* Դեկտ. 25 Դշ. — Տնօրէն փողովոյ անդամ Գեր. Տ. Դէորդ Վրդ. ծանուցեան այսօր մեկնեցաւ Ամման, ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր ներկայ գտնուելու համար Անգլոքոյանանի Վեհափառ Էմիր Ապտուլլահի որդւոյն՝ Էմիր Նայիֆի ամուսնութեան հանդիսութեանց, և ներկայացանելու նորին Ամենապատուութեան շնորհաւորութիւնները, և յանձնելու այս առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր օրհնութեան և շնորհաւորութեան գիրը:

Կր զնենք այստեղ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Էմիրին միջև փոխանակուած շնորհաւորագիրն ու անոր պատասխանը:

24/12/40

Նորին Արքայական Բարձրօրին Էմիր Ապտուլլահ որդի Հիսէյիմի, Էմիր Անգլոքոյանանու.

Ձեր Բարձրութեան կր մատուցանեմ մեր սրտիկն շնորհաւորութիւններ Ձեր ազնիւ որդւոյն՝ իւրան Նայիֆի ամուսնութեան առթիւ, և կ'աղօթեմ Աստուծոյ որ այդ ամուսնութիւնը ընէ երջանիկ և բազում, և անոր պարգեւէ բարի զաւակներ, և օրհնէ անոնց կեանքը:

ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՅ Ա. ԵՐՈՍԱՂԷՄԻ

Ամման 27/12/40

Նորին Ամենապատուութիւն Երուսաղէմի Հայոց Պատրիարքին:

Ամենայն զմահաւորութեամբ ստացած եմ Ձեր նամակը, որով զիս կր շնորհաւորեմ, որդւոյս՝ Նայիֆի ամուսնական երջանիկ ամուսնաւորութեան համար: Այս պատիւով կր կրկնեմ իմ բարի զգացումներս և ծանօթ բարեկամութիւնս, Ձեզի մաղթելով բարեկեանութիւն և յաջո-

գոյրին, եւ Հայ հասարակութեան մաղբելով կեանքի ամեն նախադասութիւն, ամեն նոսր լինելով պարտաւոր: Անհատականութիւնը կը վստահեցնէ իմ բարեկամութեան մասին:

(Ասորագր.) ԱՊՏՈՒՆԻԱՆ

* Դեկտ. 26 ԵՂ. — Երթողացոց իննդեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Գեր. լուսարարացեալ Հայր Սուրբը եւ Հոգ. Տ. Տ. Պարգեւ, Տիրայր, Պարոյր, Յուսիկ եւ Պսակ վարդապետներու ընկերակցութեամբ այցելեց Ֆրանչիսկեան Միաբանութեան կիսադասին: Ապա, Նորին Ամենապատուութիւնը, հետեւ ունենալով Գեր. լուսարարացեալ Հայր Սուրբը՝ շնորհաւորական այցելութիւն տուաւ Երթողացեալ Անկլիքան եպիսկոպոսին: Իսկ Հոգ. Տ. Տ. Տիրայր, Պարոյր, Յուսիկ եւ Պսակ վարդապետներ այս տօնին առթիւ այցելեցին Յայն կաթողիկոց Պատր. փոխանորդին, եւ Հոգ. Տ. Տ. Պարոյր եւ Պսակ վարդապետներ՝ Հայ Հռոմէականացի Պատր. փոխանորդին, իսկ Հոգ. Տ. Տ. Տիրայր եւ Յուսիկ վարդապետներն ալ Գերման կաթողիկոսութեան մեծաւորին:

* Դեկտ. 28 ԵՂ. — Լիբանանի Աղգային Բուժարանի տեղւոյն Տիկնայն ինքնակալութիւնը ներկայացաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, եւ յանձնեց, յօգուտ նոյն Բուժարանին տեղւոյն մէջ հանգանակուած գումարը՝ Լ. Պ. ՅԱ. աղաբիւնելու համար յիշեալ հաստատութեան:

* Դեկտ. 30 ԲՂ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Եթովպիոյ կոնտար Նահանգի պետ Ռաս Գասա, իր հայրենիքը վերադառնալուն առթիւ ընդունելու Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը օրհնեց բարեպաշտ Ռասը իր երկու թոռնիկներուն հետ միասին, Մենելիք կայսեր եւ Զայտիթու կայսրուհիին Ս. Աթոռին նուիրած Եթովպական խաչերով:

* Դեկտ. 31 ԴՂ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Երթողացեալ Ղպտոց եպիսկոպոսի փոխանորդը, ներկայացնելու Եգիպտոսի Ղպտոց Ամեն. Պատրիարքին եղբայրական ողջոյնները:

* Յունուար 7 ԴՂ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութիւն տուին Յապէի մեր փաստարանները՝ Պ. Պ. Բիշարտըն եւ Լէփալը:

* Յուն. 8 ԴՂ. — Սրթառքոց իննդեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետեւ ունենալով Գեր. լուսարարացեալ Հայր Սուրբը, շնորհաւորական այցելութիւն տուաւ տեղւոյն Ռուս Միաբանութեան Մեծաւորին՝ Գեր. Արչիմանտրիթ Անթոնիոյին: — Իսկ Տ. Դէորդ Վրդ. ընկերակցութեամբ քանի մը վարդապետներու, ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, շնորհաւորական այցելութիւններ տուաւ Ղպտոց, Ասորոց, եւ Հապէչաց վանքերու եպիսկոպոսներուն եւ մեծաւորներուն:

— Իսլամական Գորպան Պայրամի առթիւ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական քարգեր զրկեց քաղաքիս իսլամ մեծամեծներուն:

* Յուն. 9 ԵՂ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Ս. Աթոռոյն իրաւագէտ - խորհրդական Արգարիուս Պէյ:

* Յուն. 14 ԴՂ. — Մեր Նոր Տարին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութեան եկան՝ Վսեմ. Թարձր Գոմիսերի կողմէ՝ իր թիկնապահը, եւ Պ. Ընդհ. Քարտուղարին կողմէ՝ Բուհի Պէյ Ապտ Էլ Հատի. Երթողացեալ քաղաքացեալ Վսեմ. Մուսթաֆա Պէյ Խալտի. Թուրքիոյ, Ռումանիոյ, Չէխովապետիոյ Պ. Նիպատաները. իսկ կառավարական բոլոր բարձր պաշտօնատարները եւ օտար պետութեանց բոլոր հիւպատոսները զրկած էին իրենց շնորհաւորական նամակներն ու քարգերը:

— Յետ միջօրէի, ժամը 3.30ին, Ս. Թարգմանչաց Վարժարանի կողմէ սարքուած, Ամենորի եւ Ս. Իննդեան հանդէս մը տրուեցաւ Ե. Հ. Բարեփրական Միութեան սրահին մէջ, ընդ Նախագահութեամբ լուսարարացեալ Գեր. Տ. Կիրեղ Ե. Վրդ. ի Ներկայացուցչան կազմակերպելով, հայկական եւ մանկական պարեր, արամայիստութիւններ, արապահոթութիւններ եւ Ս. Իննդեան կենդանի պատկեր մը: Ներկայ էր Միաբանութիւնը, եւ բազմութիւն ժողովրդեան եւ ծնողները:

* Յուն. 16 ԵՂ. — Կէսօրէ առաջ ժամը 10.30ին Ս. Պատրիարք Հայրը Տնօրէն Ժողովի անդամներուն ընկերակցութեամբ, Ամանորի առթիւ այցելեց Ժողովարարաց Վարժարանը, ուր, ուսանողութենէն եւ ուսուցչական զաւէն առաջնորդուած, քայլերգով, մտաւ ներս՝ կաղանկազարդուած սրահը: Ի զիմաց ուսանողութեան, Միւնա Սարկաւազ, կարգաց ուղերձ մը՝ անցնող տարուան վրայ խորհրդածութիւններով, եւ գալիքին համար՝ յուսադրութիւններով լեցուն: Ս. Պատրիարք Հօր փափաքով, Գեր. Տ. Կիրեղ Ե. Վրդ. ի քաջալերական խօսքերէ եւ մաղթանքներէ վերջ, Նորին Ամենապատուութեան Աթին մօտեցան ամէնքը, անկէ ընդունելով Նոր Տարւոյ պըտուղ - նուէրը՝ խնձոր:

* Յուն. 20 ԲՂ. — Մեր Ս. Իննդեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ, ընդունեց շնորհաւորական այցելութիւններ՝ Ֆրանչիսկեան կիսադասին՝ իր հետեւորդներով, Ղպտոց եւ Ասորոց վանքերու մեծաւորներուն՝ իրենց հետեւորդներով, Ռուսաց վանքի մեծաւորին, Հայ եւ Յայն Հռոմէականաց Պատր. փոխանորդներուն եւ Սիոնի Տորմիսիոն վանքի մեծաւորին: